

257

Թիւ 24492  
Մարտ 10, 1975

Հոգեշնորհ  
Տ. Շնորհք Վրդ. Գասպարեան  
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Մոնթրէալ, Գանատա.

Սիրելի Հայր Շնորհք,

Ստացած ենք Փետրուար 26, 1975 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը  
հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Փետրուար 23ին գումարուած համայնքիդ  
Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի հինգ անդամոց ընտ-  
րութիւնը, եւ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Ժիական Ժողովը տեղի ունեցած է Թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիա-  
կան Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժիական Խորհուրդի նորընտիր  
Դիւան անդամոց հասցէները եւ հեռաձայնի թիւերը, նորընտիր անդամոց  
ստացած քուէները, Ժիական Ժողովի ատենագրութիւնը եւ ներփակեալ տե-  
ղեկագիրները:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր զործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ Ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Լեւոն Գործեան  
Տոբթ. Յարութիւն Արզումանեան  
Գէորգ Փելթէքեան  
Գրիգոր Տիգրանեան  
Վահագն Ազնաւուր